

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 2.05.2018 թ. թիվ 291 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐՍԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 4 26.04.2018թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 5 30.05.2019թ.

Առ 11.06.2019թ. փոփոխություններով

Արձանագրություն թիվ 5 25.06.2020թ.

Առ 30.06.2020թ. փոփոխություններով

Վանաձոր
2018թ.

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. “Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան” հիմնադրամ (այսուհետ՝ Համալսարան) պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգի /այսուհետ Կանոնակարգ/ իրավական հիմքերն են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 1-ի թիվ 201-Ն որոշումը և “Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան” հիմնադրամի կանոնադրությունը:
2. Սույն Կանոնակարգով սահմանվող ժամանակի չափորոշիչները նախատեսված են Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան բեռնվածությունը որոշելու համար:
- 3.Սույն Կանոնակարգով որոշվում են աշխատաժամանակի չափորոշիչները համալսարանի կրթական ծրագրերի (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա (հայցորդություն)) պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության հիմնական ձևերի համար՝ դասախոսների աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

4. ԿԾ-ի հաստատված ուսումնական պլանների հիման վրա ուսումնական վարչության կողմից ստեղծվում են աշխատանքային պլաններ:
 - 4.1. Աշխատանքային պլանները մինչև նախորդ ուսումնական տարվա դեկտեմբերի 1-ը ներկայացվում են դեկաններին:
 - 4.2. Դեկանները թողարկվող ամբիոնների վարիչների հետ քննարկում, ստուգում և մինչև դեկտեմբերի 25-ը ուսումնամեթոդական վարչությանն են վերադարձնում աշխատանքային պլանները:
 - 4.3. Ուսումնամեթոդական վարչությունը վերլուծում, կարգաբերում է առաջարկները, կազմում է աշխատանքային պլանների 2-րդ տարբերակը և մինչև փետրվարի 1-ը ներկայացնում դեկաններին՝ պլաններում ներառելու ուսանողների կողմից ընտրված կամընտրական դասընթացները:

4.4. Աշխատանքային պլանները հետ են վերադարձվում ուսումնամեթոդական վարչությանը մինչև մարտի 10-ը:

4.5. Աշխատանքային պլանները հաստատվում են դեկանների, ուսումնամեթոդական վարչության պետի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից մինչև մարտի 20-ը:

5. Դասախոսի ուսումնական բեռնվածության ծավալի հաշվարկը կատարվում է ամբիոնների կողմից՝ համաձայն Համալսարանում իրականացվող մասնագիտությունների և ուղղությունների կրթական ծրագրերի ուսումնական պլանների:

6. Ուսումնական բեռնվածության ծավալը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներկայացվում է ամբիոններին ոչ ուշ, քան ապրիլի 25-ը:

7. Ամբիոնները կատարում են ժամաքանակի բաշխում, ներկայացնում այն ուսումնամեթոդական վարչության պետին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ոչ ուշ քան մայիսի 25-ը:

8. Ուսումնական պլանների դասընթացները ամրագրվում և ներառվում են սպասարկող ամբիոնների ուսումնական բեռնվածքների ծավալում:

8.1. Ուսումնական պլաններից բխող դասախոսությունների ժամերը հաշվարկվում են խմբերով: Ֆակուլտետներում կուրսի բաժանումը խմբերի և ենթախմբերի կատարվում է 21-ը (21-ը հաշվարկային միավոր է գործնական պարապմունքների ուսանողների թվի համար) գերազանցող ուսանողների թվաքանակի դեպքում:

8.2. Կուրսը լաբորատոր աշխատանքի համար բաժանվում է ենթախմբերի 16 և ավելի ուսանողների դեպքում:

8.3. Ամբիոնների ժամաքանակի համար հաշվարկային է ուսումնական խումբը:

9. Ուսումնական պլանի առաջին, երկրորդ, երրորդ կրթամասերի համահամալսարանական դասընթացների դասախոսությունները կազմակերպվում են հոսքով (հոսքը՝ թվով ոչ ավելի, քան 51 ուսանող):

9.1. Առանձին կուրսեր կամ խմբեր կարող են միավորվել մեկ ընդհանուր հոսքի մեջ դասախոսությունների կամ գործնական դասընթացների ժամանակ միայն այն պարագայում, եթե նրանց համար նախատեսված դասընթացի ծրագիրը, ծավալը և

Ժամաքանակը նույնն են կամ ունեն 10 %-ի տարբերություն (գործնական, սեմինար, լաբորատոր):

9.2. Կուրսի միավորումը մեկ հոսքի մեջ կամ նրա տարանջատումը մի քանի ենթախմբերի կատարվում է միայն ուսումնամեթոդական վարչության կողմից՝ ամբիոնների վարիչների և դեկանների հետ համաձայնեցված:

10. Հաջորդ ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների նախապատրաստման փուլում ամբիոնները և դեկանատը փոխհամաձայնեցնում են կամընտրական, լրացական և ֆակուլտատիվ դասընթացների ցանկը և դասաժամերի ծավալը:

11. Կամընտրական, լրացական և ֆակուլտատիվ դասընթացների ցանկը, առարկայական ուսումնական փաթեթները (հնարավոր Power Point ձևաչափով), դասավանդող դասախոսների անունները ներկայացվում են ուսանողներին՝ ծանոթանալու և ընտրելու նպատակով՝ համաձայն «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության կարգի»:

III. Ուսումնական բեռնվածության ժամային ծավալի հաշվարկը

12. Ամբիոնների ուսումնական բեռնվածությունը կազմվում է տվյալ ուսումնական տարվա խմբերի քանակի և ուսանողների թվաքանակի հիման վրա:

13. Ուսումնամեթոդական վարչությունը հաշվարկում է ուսումնական բեռնվածության ծավալը հաջորդ ուսումնական տարվա ուսումնական գործընթացի աշխատանքային պլանների հաստատումից հետո:

14. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության տեսակներն են.

1. Դասախոսություններ,
2. Լաբորատոր, գործնական և սեմինար պարապմունքներ,
3. Անհատական, խմբային խորհրդատվություններ (նախաքննական, ընթացիկ, ամփոփիչ),
4. Ինքնուրույն աշխատանքի ղեկավարում,
5. Ստուգարքների, քննությունների, ավարտական որակավորման քննությունների ընդունում,
6. Ուսումնական, արտադրական պրակտիկաների ղեկավարում,
7. Հայցորդների և ասպիրանտների աշխատանքների ղեկավարում,

8. Ուսումնամեթոդական նյութերի ստեղծում,

9. Ավարտական որակավորման աշխատանքների ղեկավարում, գրախոսում և այլն,

10. Դասապատրաստում,

11. Գիտահետազոտական աշխատանք,

12. Սոցիալ-դաստիարակչական աշխատանք,

13. Կազմակերպչական - մեթոդական աշխատանք:

15. Թվարկված բոլոր աշխատանքների ժամաքանակը ամրագրվում է դասախոսի անհատական պլանի «Ուսումնական աշխատանք», «Ուսումնամեթոդական աշխատանք», «Գիտահետազոտական աշխատանք», «Սոցիալ-դաստիարակչական աշխատանք», «Կազմակերպչական-մեթոդական աշխատանք» բաժիններում:

16. Ուսումնական բեռնվածության ծավալը հաշվարկվում է ուսանողների ընդհանուր թվով (ընթացիկ ուս. տարվա մարտի 1-ի դրությամբ)՝ ներառյալ.

- 1) բակալավրիատի կրթական ծրագրերի
- 2) մագիստրատուրայի կրթական ծրագրերի
- 3) ասպիրանտուրայի (հայցորդություն) կրթական ծրագրերի
- 4) Ուսուցման բոլոր ձևերի (առկա, հեռակա),
- 5) Ֆինանսավորման բոլոր ձևերի (վճարովի, անվճար), ուսանողների թվաքանակի

17. Առկա ուսուցման համակարգի ընդունելության և ուսանողների շարժի արդյունքները, խմբերի և հոսքերի թվաքանակի հիման վրա ղեկանատները և ամբիոնները կատարում են ժամերի վերահաշվարկ, որը տրամադրվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից առ 24-ը օգոստոսի:

18. Տվյալ ուսումնական տարվա ժամաքանակի վերջնական վերահաշվարկը կատարվում է մինչև տվյալ ուս. տարվա նոյեմբերի 1-ը (հեռակա ուսուցման համակարգի ընդունելությամբ պայմանավորված):

Ամբիոնների հաստիքների հաշվարկը և պաշտոնակալման սկզբունքները

19. Դասախոսի լրիվ ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի 1000-1050 ժամը:

20.1 Ամբիոնի կողմից զբաղեցրած հաստիքների թիվը (ըստ պաշտոնների տեղակալման) հաշվարկվում է տվյալ ուսումնական տարվա ընդհանուր և լսարանային ժամաքանակների հաշվառմամբ՝ ըստ հետևյալ չափորոշիչների.

	դասախոսություն	գործնական, սեմինար	լաբորատոր
Պրոֆեսոր	45%	5%	
Դոցենտ	35%	15%	
Դասախոս և ասիստենտ	20%	80%	100%

20.2 Ամբիոններում տարիների ընթացքում ժամաքանակի նվազման հետևանքով առաջացած տարբերությունները կարող են ճշտվել մինչև 2020-21 ուսումնական տարվա սկիզբը:

21. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը ձևավորվում է մրցույթի արդյունքով հաստիքը պաշտոնակալած, համատեղությամբ (այդ թվում՝ ներքին համատեղությամբ) և ժամավճարային կարգով աշխատանքի հրավիրված դասախոսներով:

22. Համալսարանում վարչական աշխատակազմի մեջ ընդգրկված դասախոսների աշխատանքը համարվում է ներքին համատեղություն:

23. Ամբիոնի ժամաքանակի 20%-ը կարող է տրամադրվել համատեղությամբ, ժամավճարով աշխատանքի հրավիրվողներին մարդկային ռեսուրսների կառավարման նպատակով:

24. Առանձին դեպքերում հրավիրված դասախոսների հետ ռեկտորը կարող է կնքել համատեղության պայմանագիր:

25. Չի թույլատրվում գերազանցել դասախոսի բեռնվածքի համար սահմանված վերին շեմը:

26. Եթե ուսումնական տարվա ընթացքում անհրաժեշտություն է առաջանում դասախոսի ուսումնական բեռնվածքի մեծացման (տարբեր օբյեկտիվ պատճառներով՝ ամբիոնի դասախոսի բացակայություն, աշխատանքից ազատում, ուսանողների թվի ավելացման արդյունքում խմբերի թվի մեծացում և այլն), ապա դասախոսի հետ կնքվում է ժամավճարային հիմունքով աշխատելու պայմանագիր (համաձայնագիր)՝ ամբիոնի վարիչի առաջարկով և դասախոսի դիմումի համաձայն:

27. Դասախոսի անհատական բեռնվածքը հաշվարկվում է ամբիոնի վարիչի կողմից՝ համաձայնեցված դեկանի և ուսումնամեթոդական վարչության հետ:

28. Դասախոսի անհատական բեռնվածքը, պայմանավորված պաշտոնակալած հաստիքով, հաշվարկվում է հետևյալ սանդղակով.

Պաշտոնը	Ընդհանուր ժամեր
Պրոֆեսոր	700
Բոցենտ	800
Ասիստենտ	850
Դասախոս	900

**ՎՊՀ-Ի ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

Բաժին 1 . Ուսումնական աշխատանք

Թիվ	Աշխատանքի տեսակը	Ժամաքանակի չափորոշիչ	Ծանոթություն
	Դասախոսություն	1 ժամ 1 ակադեմիական ժամի համար	Մեկ հոսքի համար (հոսքը մինչև 51 ուսանող)
	Սեմինար, գործնական, պարապմունքների անցկացում	1 ժամ 1 ակադեմիական ժամի համար	սեմինարի համար կուրսը բաժանվում է ենթախմբերի, եթե ուսանողների թիվը գերազանցում է 31-ը, իսկ գործնականինը 21-ը
	Լաբորատոր պարապմունքների անցկացում	1 ժամ 1 ակադեմիական ժամի համար	Մեկ ենթախմբի համար/մինչև 15 ուսանող
	Ուսումնական ինտերակտիվ պարապմունքներ, գործարար խաղեր, կոնկրետ իրադրությունների վերլուծություն, արտադրական խնդիրների լուծում և այլն	1 ժամ 1 խմբի (ենթախմբի) ակադեմիական ժամի համար	դասախոսների թիվը որոշվում է ամբիոնի վարիչի կողմից

Բաժին 2. Խորհրդատվություններ

	Խորհրդատվությունների անցկացում	2 ժամ ընթացիկ քննությունից առաջ	1 ենթախմբի համար
	Ուսանողի ինքնուրույն աշխատանքի ղեկավարման ընթացիկ խորհրդատվություն	1 ուսանողին 0.2 ժամ	
	Խմբի խորհրդատու		50 ոչ լսարանային ժամ

Բաժին 3. Ղեկավարում

Կուրսային աշխատանքների ղեկավարում, խորհրդատվություններ, գրախոսում և պաշտպանություն	Բակալավրի հիմնական կրթական ծրագիր (առկա)	1 աշխատանքի համար 3 ժամ	այդ թվում 0.5 ժամ աշխատանքի պաշտպան. և 0.5 ժամ գրախոսման համար
	Բակալավրի հիմնական կրթական ծրագիր (հեռակա)	1 աշխատանքի համար 3 ժամ	այդ թվում 0.5 ժամ աշխատանքի պաշտպան. և 0.5 ժամ գրախոսման համար
	Մագիստրոսի հիմնական կրթական ծրագիր	1 աշխատանքի համար 3 ժամ	այդ թվում 0.5 ժամ աշխատանքի պաշտպան. և 0.5 ժամ գրախոսման համար
Բակալավրի հիմնական կրթական ծրագրով ավարտական աշխատանքների (նախագծի) ղեկավարին		առկա - 10 ժամ գործնական հեռակա - 10 ժամ գործնական	ԱՌՔ նախագահին 1 ժամ, քննողին՝ 0.5 ժամ
Մագիստրոսական թեզի ղեկավարին		20-ական ժամ գործնական, այդ թվում՝ II կիս.- 4 ժամ III կիս.- 8 ժամ IV կիս.- 8 ժամ	III և IV կիսամյակներում ԱՌՔ նախագահին 1.5 ժամ, քննողին՝ 0.5 ժամ Արտաքին կարծիքի գրախոսման համար 4 ժամ
Ամբիոնի ղեկավարության, ուսումնամեթոդական սեմինարների, դասալսումների և դրանց քննարկման աշխատանքները ղեկավարելու, մեթոդական նյութերի ստուգում		100 ժամ	
Ուսումնական պրակտիկայի ղեկավարում՝ հաշվետվության ստուգումով և ստուգարքի ընդունումով (մանկավարժական և համալսարանական)		պրակտիկայի ընթացքում յուրաքանչյուր ուսանողին 0.2-0.3 ժամ	
Մագիստրատուրայի սովորողների գիտամանկավարժական պրակտիկայի ղեկավարին		մագիստրոսական թեզի ղեկավարին 1 սովորողի համար 3 ժամ	պրակտիկան կազմակերպում է ամբիոնը
Մագիստրատուրայի սովորողների գիտահետազոտական պրակտիկայի ղեկավարին		մագիստրոսական թեզի ղեկավարին 1 սովորողի համար 2 ժամ	Պրակտիկայի ընթացքում կատարած

			աշխատանքը հողվածի հիմք է դառնում
Բաժին 4. Ստուգում			
	Ամփոփիչ ատեստավորում (բակալավրի հիմնական կրթ. ծրագիր)	ամբիոնին 0,5 ժամ 1 ուսանողի համար	ԱՌՔ նախագահին 1 ժամ, քննողին՝ 0,5 ժամ
	Ամփոփիչ ատեստավորում մագիստրատուրայի (կրթական ծրագիր)		ԱՌՔ նախագահին 1.5 ժամ, քննողին՝ 0,5 ժամ
	Ստուգարքների ընդունում	1 ուսանողին 0.2 ժամ	
	Դիֆերենցված ստուգարքների ընդունում (միայն տեսական դասընթաց ունեցող առարկաներից)	1 ուսանողին 0.3 ժամ	
	Քննությունների ընդունում (ընթացիկ ստուգումներով)	1 ուսանողին 0.6 ժամ	
	Քննությունների ընդունում (առանց ընթացիկ ստուգումների)	1 ուսանողին 0.4 ժամ	
	Մագիստրատուրայի սովորողների գիտահետազոտական պրակտիկայի ստուգման համար	1 աշխատանքի համար 0.5 ժամ	
	Մագիստրատուրայի սովորողների գիտամանկավարժական պրակտիկայի ստուգման համար	1 աշխատանքի համար 0.5 ժամ	
	Հայցորդի գիտամանկավարժական պրակտիկա	1 սովորողի համար 1 ժամ	
	Հայցորդի գիտահետազոտական պրակտիկա	1 սովորողի համար 1 ժամ	
	Բակալավրի ընդունելության քննությունների ընդունում	1 աշխատանքի ստուգման համար 0.3 ժամ	
	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության ԸՖՊ դասընթացի նորմատիվային ստուգում	1 ուսանողի համար 0.5 ժամ	
	Մագիստրատուրայի ընդունելության հարցազրույց	1 ուսանողի համար 0.2 ժամ	
Բաժին 5. Պրակտիկա			

Մանկավարժական (արտադրական) պրակտիկա	6-րդ կիսամյակ ¹ (7-րդ կիսամյակ)	<p>բուհին՝</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական ամբ. – 6 ժամ մանկավարժության ամբ.– 1 ժամ հոգեբանության ամբ. – 1 ժամ <p>դպրոցին՝</p> <ul style="list-style-type: none"> ուսուցչին – 6 ժամ տնօրենին – 0,5 ժամ փոխտնօրենին – 0,5 ժամ
	7-րդ կիսամյակ (8-րդ կիսամյակ)	<p>բուհին՝</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական ամբ. – 6 ժամ մանկավարժության ամբ.– 1 ժամ հոգեբանության ամբ. – 1 ժամ <p>դպրոցին՝</p> <ul style="list-style-type: none"> ուսուցչին – 6 ժամ տնօրենին – 0,5 ժամ փոխտնօրենին – 0,5 ժամ
Մանկավարժական (արտադրական) պրակտիկա (հեռակա)	8-րդ կիսամյակ (9-րդ կիսամյակ)	<p>բուհին՝</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական ամբ. – 6 ժամ մանկավարժության ամբ.– 1 ժամ հոգեբանության ամբ. – 1 ժամ <p>դպրոցին՝</p> <ul style="list-style-type: none"> ուսուցչին – 6 ժամ տնօրենին – 0,5 ժամ փոխտնօրենին – 0,5 ժամ
	9-րդ կիսամյակ (10-րդ կիսամյակ)	<p>բուհին՝</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական ամբ. – 6 ժամ մանկավարժության ամբ.– 1 ժամ հոգեբանության ամբ. - 1 ժամ <p>դպրոցին՝</p> <ul style="list-style-type: none"> ուսուցչին – 6 ժամ տնօրենին – 0,5 ժամ

¹ Փակագծում գրվածը համալսարանական կրթական ծրագիրն է:

			<ul style="list-style-type: none"> փոխտնօրենին – 0,5 ժամ 	
	Մագիստրատուրայի սովորողների գիտահետազոտական պրակտիկայի հաշվետվության կազմում	մագիստրոսական թեզի ղեկավարին 1 սովորողի համար 0.5 ժամ		հոդվածի նախապատրաստման համար
	Հայցորդի գիտամանկավարժական պրակտիկա	թեզի ղեկավարին 1 հայցորդի համար 10 ժամ		
	Հայցորդի գիտահետազոտական պրակտիկա ²	1 հայցորդի համար – 15 ժամ		հոդվածի նախապատրաստում

Բաժին 6. Ուսումնամեթոդական փաթեթի (ԱՈԻՄՓ) ստեղծում

N	Աշխատանքի տեսակը	Աշխատանքի հաշվարկման միավորը	Ժամահաշվարկի նորմերը ժամերով արտահայտված	
			5-ից ավելի կրեդիտ աշխատածավալի դասընթաց	2-5 կրեդիտ աշխատածավալի դասընթաց
1.	Առարկայի նկարագիր	1 նկարագիրը	10	8
2.	Առարկայի ուսուցման կազմակերպման մեթոդական երաշխավորությունների			
3.	Մեթոդական երաշխավորություններ դասախոսների համար	1 երաշխ.	4	2
4.	Մեթոդական երաշխավորություններ ուսանողների համար		4	2
5.	Ընթացիկ, միջանկյալ և ավարտական ամփոփումների բովանդակությունն ու անցկացումը կարգավորող նյութեր		3	2
6.	Ընթացիկ ստուգման ուսումնամեթոդական ապահովում	1 փաթեթ	4	2
7.	Միջանկյալ և ավարտական ամփոփումների		8	2

² Այլ բուհերից կամ կազմակերպություններից գիտական ղեկավարների դեպքում գիտահետազոտական պրակտիկային հատկացվող ժամաքանակը տրամադրվում է ղեկավարին կամ նրա համաձայնության դեպքում՝ ամբիոնի կողմից նշանակված դասախոսին:

	ուսումնամեթոդական ապահովում			
8.	Պետական որակավորման ուսումնամեթոդական ապահովում		4	2
9.	Մանկ./արտադրական/ պրակտիկայի ծրագիր և նյութեր	1 ծրագիր	4	2
10.	Ուսանողի անհատական/ինքնուրույն աշխատանքի ուսումնամեթոդական ապահովում		4	2
11.	ԱՌԻՄՓ-ի դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ (քարտեզ)	1 քարտ	4	2
12.	ԱՌԻՄՓ -ի գործնական պարապմունքների ուսումնամեթոդական քարտ (քարտեզ)		8	4
13.	ԱՌԻՄՓ-ի ինքնուրույն պարապմունքների ուսումնամեթոդական քարտ (քարտեզ)		6	4
14.	ԱՌԻՄՓ-ի ուսումնամեթոդական ռեսուրսների քարտ(քարտեզ)	1 քարտ	4	2
15.	ԱՌԻՄՓ-ի մեթոդական երաշխավորություններ և ուսումնամեթոդական նյութեր	1 երաշխ.	8	2
16.	Առարկայի ուսումնամեթոդական փաթեթի (ԱՌԻՄՓ) վերամշակում	1 փաթեթ	5	
17.	Համալսարանի հանձնարարությամբ ներդրվող անգլերեն, ռուսերեն լեզուներով կարդացվող դասընթացների ԱՌԻՄՓ	1	160	80